ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԱՅՐ ԱԹՈՌ

Մայիսի սկզբից սկսուեցին Մայր Աթոռիս Հոգ. Ճեմարանում հարցաքննութիւնները։

Վեհափառ Հայրապետը ներկայ է լինում քննութեանց մեծ մասին։

Այսիս 15-ին ժամանեցին Մայր Աթոռս Մայր Տաճարի վերանորոգութեան յանձնաժողովի անդամներից պարոնայք—ճարտարապետներ Բաբանեան, Տէր Սարգսեան և Մատաթեան, նկարիչներ Բաշինջաղեան ու Ֆէթվաճեան։ Պարոնները ներկայացրին Վեհափառ Հայրապետին տաճարի արդի դրութեան յատակագիծն ու ուրուանկարները զանազան կողմերից և բերանացի զեկուցին վերանորոգութեան մանրամասնութիւնները։

Վեհափառ Հայրապետի հաճութեամբ նոյն օրը երեկոյեան ժամի 7-ին Սինոդի աւագ անդամ Տ. Գէորգ Աբքեպիսկոպոսի նախագահութեամբ և Տ. Կոմիտաս վարդապետի քարտուղարութեամբ կազմուեց խորհրդակցութիւն, որին ներկայ էին Սինոդի, Հայրապետական Դիւանի, Տաճարի վերանորոգութեան Յանձնաժողովի անդամներն և Ս. Էջմիածին եկած ճարտարապետներն ու նկարիչները։

Խորհրդակցութիւնը եկաւ հետևեալ եզրակացութեան.

«Ա. Ի նկատի ունենալով, որ այժմեան վիճակում թողնել չի կարելի տանիքը, քանի որ անձրևներից Մայր Տաճարը խիստ վնասւում է, համաձայն ճարտարապետների և գեղարուեստագէտների առաջարկութեան՝ անպատճառ պէտք է ծածկել կտուրը, որչափ կարելի է շուտով, մինչև աշնանը վերջանայ։

«Բ. Տիխիսի ճարտարապետների և նկարիչների խումբը պէտք է անմիջապէս մրցութեան յայտարարէ Մայր Տաճարի վերանորոգութեան ծրագիրը նախապէս զեկուցանելով և սահմանելով նորին Սրբութեան թոյլտուութիւնը մրցութեան պայմանների համար։

«Գ. Աչքի առաջ ունենալով, որ առհասարակ Մայր Աթոռում կառուցուած շէնքերը իրար չեն համապատասխանում և չունեն մի ընդհանուր գեղարուեստական ճարտարապետական ներդաշնակութիւն, ուստի այսուհետև կառուցուելիք նոր շէնքերի համար անպայման պիտի դիմել մասնագէտ ճարտարապետների ձեռնհաս խորհրդին և կատարուի նոցա հսկողութեամբ շէնքերի կառուցումը»։

Ս. Էջմիածնի Մայրավանքի արևմտեան պարսպից դուրս պէտք է շինուի նոր վեհարանը ճարտարապետ պ. Պ. Զոհրաբեանի կազմած յատակագծով, որ հաւանութիւն է գտել Վ.Եհ. Հայրապետից. հիմքը մասնագէտ տեխնիկի ցուցմունքներով և հսկողութեամբ արդէն փորուում է, և շինութեան նիւթերը մասամբ պատրաստ են։ Ցունիսի սկիզբներին կը լինի հիմնարկութիւնը։

Մայիսի 20-ին առաւօտեան $7^1/_2$ ժամին այցելեց Մայր Աթոռս Սենատի վճռաբեկ բաժնի օրեր-պրօկուրոր գաղտնի խորհրդական Նիկոլայ Միխայիլովիչ Ռէյնկէ իւր հետևորդների հետ և իջևանեց Վեհարանում։

Նորին Գերազանցութիւնը ներկայացաւ Վեհափառ Հայրապետին, շրջեց և տեսաւ Մայր Աթոռիս կարևոր հաստատութիւնները, Զուարթնոց աւերակ եկեղեցին, Վաղարշապատի հաշտարար դատարանը և, Վեհարանում ճաշելուց յետոյ, $2^1/_2$ ժամին մեկնեց Երևան։